Հյուսված պատմություններ

2024

Ճամբարակ

Հայաստանի սահմանամերձ համայնքներում ապրող դեռահաս աղջիկները բախվում են բազմաբնույթ մարտահրավերների, որոնք ազդում են նրանց առօրյա կյանքի և ապագայի ընկալման վրա: Բացի անվտանգային սպառնալիքներից և անհանգստություններից, նրանք հաճախ ստիպված են հաղթահարել տարիքով և սեռով պայմանավորված խտրականությունները: Որպես խոցելի խումբ՝ նրանց կարիքներն ու ձգտումները հաճախ անտեսվում են տանը, դպրոցում և ավելի լայն համայնքում:

«Հյուսված պատմություններ Ճամբարակից» զինը, որը ստեղծվել է խմբային բանավոր պատմության և երկխոսության մեթոդաբանությունների հիման վրա, նպատակ ունի կիսել Ճամբարակ խոշորացված համայնքի մի խումբ դեռահաս աղջիկների* պատմություններն ու մտորումները այն հարցերի շուրջ, որոնք ուղղակի կամ անուղղակի կերպով ազդում են նրանց և նրանց համայնքի վրա՝ գենդերային անհավասարությունից մինչև պատերազմ և խաղաղություն:

Փորձը ցույց է տալիս, որ իրենց շուրջը տեղի ունեցողի մասին կարծիքներ արտահայտելիս դեռահասները հաճախ վերարտադրում են համայնքում ընդունված խոսույթները: Այնուամենայնիվ, երբ կա ապահով տարածք և քննադատական մտքի խրախուսում, նրանցից շատերը սկսում են հարցականի տակ դնել գերիշխող նարատիվները և իրականությունը վերլուծել ավելի լայն ոսպնյակով:

- Գայանե Ղազարյան

Հարցազրույցների մասնակիցների անվտանգությունն ու գաղտնիությունը ապահովելու նպատակով՝ իրենց պատմությունները կիսած պատանիների անունները նշված չեն:



Էս մեր Ճմբարակն ա: Ստեղ մեր հետի ապրում ենք: Լոխ լյավ ա: Ջրի պակաս չունենք, սարերը կան, առավոտը կոֆե ենք խմում, իրիկվա հովին քինում ենք ման քյալ, կովերին ենք եշում, էրեխեքին ենք տեսնում հողոտ, վեր վազ են տալիս:

Ստի սահմանամերձ ա: Սաղ օրը լարված եշում ենք լուրերը, վեր տենանք՝ մեր վերջը ինչ տի լի, բայց էս էրեխեքին էլ վեր տենում ենք վազիլիս, իրանց էն հողոտ մռութնիքը չէ՞, վա՛յ, էլ ի՞նչ լարվել: Արդեն մեր հետի հանգիստը տված՝ վայելում ենք ստի էս խաղաղ բնությունը: Առանց Ճմբարակ չեմ պատկերացնում իմ կյանքը: Ստի հողն ու ջուրը մին է՝ ուրիշ ա:

համայնքն ու երիտասարդ աղջիկները

Համայնք ասելով՝ հասկանում ենք հասարակությունը, տեղի ժողովուրդը, որոնք անում են հնարավորինս ամեն ինչ համայնքի բարելավման և զարգացման համար: Երիտասարդների ձայնը լիարժեք լսելի չի մեր համայնքում ու չի կարևորվում: Ավելի մեծերը՝ ուսուցիչները և ինչու՞ չէ՝ նաև ծնողները, չեն կարևորում մեր խնդիրները և այն հարցերը, որոնք մեզ մտահոգում են:

Համայնքում մենք ունենք բավարար ուժ մեզ հուզող հարցերը լուծելու համար, բայց քանի որ մեր ձայնը լսելի չէ, դրա պատճառով մենք չենք կարողանում լուծել այն հարցերը, որոնք մեզ դուր չեն գալիս: Դրանցից են, օրինակ, երիտասարդական կենտրոն բացելու հարցը, որը համայնքում ապրող շատ երիտասարդներին է հուզում:

Մեկ-մեկ մեր վրա նենց ճնշում են դնում, որ փոշմանում ենք, որ աղջիկ ենք ծնվել:

Լուսանկարը՝ Անուշ Մխիթարյանի

Մեր համայնքում ուզած-չուզած միշտ խառնվում են մարդկանց կյանքին, ավելի կոնկրետ՝ աղջիկների/կանանց: Միշտ տղաներին վեր են դասում: Միշտ տղաներին ամեն ինչ կարելի ա. ուշ տուն գալ, իրենց վատ պահել, սիրել ու սիրվել, իսկ աղջիկները՝ պահ... չասեմ էլի: Ստեղի մարդկանց մտածելակերպով՝ աղջիկը մինչև երեսուն տարեկան պետք ա սուսուփուս տանը նստի ու մենակ հյուրերի դիմաց սուրճի սեղան գցի: Ու հա՛, է՛ն սեղանը, որի շուրջ բոլորը քննարկում են մեկը մյուսին: Իհարկե, բացառություններ կան, բայց էնքան շատ են նեգատիվ մարդիկ, որ դրական մարդիկ չեն էլ երևում, է՛:

Գալիս ա պահ, որ հասկանում ես՝ կյանքը մի անգամ ա տրվում ու պետք ա ապրես ու վայելես նենց, ոնց սիրտդ ու ուղեղդ թելադրում ա, բայց մեկ էլ հոպ. հիշում ես՝ դու որտեղ ես ապրում: Հիշում ես, որ ոչ թե պետք ա քո ուզածով շարժվես, այլ Պողոսի կամ Պետրոսի: Մի օր մի աղջա էննա տղա քյա, չէ՞... Վա՛յ, կսարքեն հայոց հարց: Քիչ ա մնում տվյալ աղջկան Ժաննա դ'Արկի օրը գցեն: Բա ուսուցիչները՝ վա՛յ-վա՛յ-վա՛յ: Հա, համաձայն եմ՝ դասի ժամերին ինչ կատարվում ա, իրանք իրավունք ունեն նկատողություն անեն կամ մեր մի քայլով հետաքրքրվեն, բայց երբ դասի ժամից դուրս ա՝ այ ձեր ցավը տանեմ... Ես չեմ կարում հասկանամ իրանց: Ասենք քյացել եմ հաց առնեմ ու հայդա քյամ տուն: Ինչի՞ են ինձ հարցնում. «Էս ու՞ր, էս խի՞, էս որտե՞ղ»: Ա ձեր ի՞նչ, այ ձեր ցավը տանեմ: Վեր պատասխանեցի, պյան դի փոխվի՞: Է՛, չգիտեմ, բարդ ա ստեի ժղովուրդի հետ, բայց մին ա՝ մեջները մի ձգող բան կա, էլի... Հո զոռով չի:

Նկարազարդումները՝
Ինա Գրիգորյանի


Երբ հիասրի՛

Ամիսներ-դրանցում կանգնած է։
Ոնց որ գրքի լիներ։ խնամի՛ ժեպ։

Ռեպադրոբյուն պակաս ունեն։
Դիշ եմ։ Ինչ ծի ժիշ համտաբի պահի։

Լուսանկարները՝ Անուշ
Մխիթարյանի, Միլենա Գրիգորյանի,
Զարուհի Սարգսյանի և Կարինե Թիզյանի

ՊԱՏԵՐԱԶՄ, ԲՌՆՈՒԹՅՈՒՆ, ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ



Ես մտածում եմ, որ չկա վատ ազգ՝ կան վատ մարդիկ: Ու էդ վատ մարդիկ կան ամեն ազգում էլ ու սենց ճիշտ չի ասել, որ թուրքերը [և ադրբեջանցիները] սենց ամբողջությամբ վատն են: Կան լավ մարդիկ իրանց մեջ էլ: Եթե հանդիպեի իմ տարիքակիցներին, մեծ հաճույքով կուզենայի նախ իմանայի՝ իրանք ինչ են մեր մասին մտածում:

Տարբեր մարդիկ կան ու տարբեր տեսակետներով ու վստահ եմ՝ օրինակ մեր տարիքի ադրբեջանցի ինչ-որ երեխա նույն կարծիքին կլինի ինչ մենք, ու ինքն էլ հաստատ խաղաղություն կուզի, որովհետև ենթադրում եմ, որ եթե օրինակ իմ հայրիկը սահմանին ա, կարա նույնն էլ իրա հետ լինի ու ինչ անում ա, կառավարությունն ա դրդում: Չգիտեմ, կարող ա մարդկանց մեծ մասը վատ ա տրամադրված մեր ազգի հանդեպ, բայց դե մարդիկ էլ կան, որ խաղաղություն են ուզում:



Մեր թաղում կա տենց ազգությամբ ինքը ազրբեջանցի ա: Ամուսնացել ա մալականի հետ ու հիմա մեր թաղում են ապրում ու էնքան լավ մարդ ա: Իսկականից մեր թաղում ամենասրտացավը ու բարին ինքն ա ու ամենաշատը իրան եմ սիրում: Բայց դե, որ թուրքերի արած ոճրագործություններն էլ հիշում ես, էդ 1915 թվականի Եղեռնը, պատերազմը, սենց վրեժ ա արթնանում: Պատերազմը, կռիվ տալը էդքան էլ լավ բան չի: Որ սկսում են կռիվ տալ, անմեղ մարդիկ դրա մեջ հարյուր տոկոս ոչ մի մեղավորություն չունեն, որ իշխանությունները իրար հետ յոլա չեն կարում գնան:

Նկարազարդումը՝ Ժասմին Միրզոյանի, 14 տ.

2020թ. Սեպտեմբերի 27-ին ես ընդամենը տասը տարեկան էի, հույզերը՝ շատ, իսկ վախը՝ էլ ավելի մեծ: Նույն օրը հայրս բարձրացավ դիրքեր: Մինչև այսօր հիշում եմ մորս թաց աչքերը: Ինչքան էլ դժվար էր, բայց պետք է գնայինք տատիկիս գյուղ: Բայց մայրիկս որոշեց մնալ: Ես կյանքում Ճամբարակը չէի տեսել այդքան դատարկ. ուղղակի քար լռություն: Չկար առաջվա երեխաների բարձր աղմուկը և ուղղակի կարոտում էի այդ օրերը:

Թեկուզ փոքր էի, բայց հիշում եմ հոպարիս խնդրանքը վերջին անգամ, որը մերժեցի: Նա ուղղակի ուզում էր, որ երգեի իր համար՝ չմտածելով, որ դա էլ կլինի մեր վերջին հանդիպումը: Զոհվելուց ընդամենը երեք ժամ առաջ էի խոսել հետը՝ մինչև որոշ ժամանակ անց լսեցի մահվան լուրը: Ցավոտ էր: Թվում էր, թե կյանքը կանգ առավ: Բայց մինչև այսօր էլ ես հիշում եմ նրան ու շնորհակալ եմ: Այս պատերազմը իմ կյանքի վրա իրոք թողեց մի մեծ հետք՝ գնահատելու այն, ինչ ունես:

2022թ. նոյեմբեր. արցախյան շրջափակումն էր: Այս ամենից որոշ ժամանակ անց հայրս որոշեց ծառայության անցնել Ղարաբաղում: Հայրս մի տարի մնաց շրջափակման մեջ: Մի օր տուն մտա, չհասկանալով՝ ինչ է կատարվում, նայելով տատիկիս թաց աչքերին, հասկացա, որ պատերազմն էր, իսկ մենք լուր չունեինք հայրիկից շուրջ երեք օր: [...] Իմ համար շատ դժվար էր, որովհետև արթնացել էր կորցնելու վախը: Հայրս մասնակցություն ունեցել է Արցախյան պատերազմին՝ անցնելով շատ բաների միջով, բայց մեզ երբեք չի ասել:

Հաջորդ օրը դպրոցում խոսեցինք Արցախի մասին: Ես ուղղակի չկարողացա զսպել արցունքներս, քանի որ ինձ միշտ ասում էին, որ տղամարդկանց թույլ չէին տալու վերադառնալ: Ես երբեք ցույց չեմ տվել՝ ինչ եմ զգում: Հայրս իմ նկատմամբ լրիվ ուրիշ մարդ էր ու անսահման կարոտը ուղղակի անտանելի էր: Փառք Աստծո, որ հայրս վերադարձավ: Ուրիշ ոչինչ չէի ուզում:

Սենյակ ջան, էլա 5ն
15 սիրուհի մեզը մոգի,
«Ձայրայիսի Լիներմը»
25, հոպար, ինձանց կարիքն
ա: Այ խոսք
մի չասի որ
սպասող չա,
կմոգանմ:

Բարև,
հոպար,
ողջ ես:
Ամենա մեջ
հար տեղ ա
կարոտել
ձեզ ձեզ
Բարև
ցավոք չարի մեջ,
ճանապարհ չեմ:
Բա ողջ ես, բա-
զմիցը ողջ ա:



Նկարազարդումը՝ Մելինե
Կիրակոսյանի, 15 տ.

հույզը բոլոր մարդկանց համար
ա՝ և՛ տղաների, և՛ աղջիկների

“

Ընդհանրապես ես նկատել եմ՝ էս 44-օրյա պատերազմից հետո ծանոթներ կային, ովքեր սթրեսի մեջ էին ու ամեն ինչից շուտ ներվայնանում էին: Ոնց որ չէին ուզում ոչ ոքի լսեին: Լսելու ունակությունը իրանց մոտ կորել էր: Մինչ պատերազմը իրանք հանգիստ էին, աշխույժ, կյանքով լի, իսկ պատերազմից հետո ոնց որ իրանք մեկուսացված լինեին: Չէին ուզում իրանց հարց տային ընդհանրապես պատերազմի վերաբերյալ:

Էդ ցավը, որ իրանց մեջ են կուտակում, դրանից իրանց ագրեսիան ավելի ա շատանում: Ֆիզիկական բռնության ենթարկվողը պետք ա չներվայինանա, այլ կառավարի իրա հույզերը ու աջակցի:

Իրականում ոչ մեկ իրավունք չունի մյուսի նկատմամբ ինչ-որ բռնություն կատարի:

Իմ պապան մինչև էդ շատ ժամանակ էր անցկացնում մեր հետ, շատ շփվում էինք: Օրինակ՝ կարար դուրս գար մեր հետ խաղար, բայց դրանից հետո՝ չգիտեմ: Երբ որ արդեն եկել էր, իրա հետ նույնիսկ խոսալ էլ չէր ստացվում: Մեկուսացած էր նախ, բայց հիմա մի քիչ ավելի դեպի դրականը փոփոխություն կա:

Բայց պիտի հասկանալ, որ էդ* շատ սխալ ա, որովհետև պատերազմից հետո իմ պապայի մոտ էդ ներվային վիճակն էր: Ինքը փորձում էր ամեն ինչով իրան զբաղեցնի, որ չջղայնանա մեր վրա, ինչ-որ բան չանի: Միշտ գնում էինք խանութներ, հետաքրքիր բաներ էինք առնում, գալիս էինք ու ինչ-որ փոքր տնակներ, բաներ էինք պատրաստում, ու ինքը միշտ իրա համար ինչ-որ զբաղմունք էր գտնում, որ ազատ չմնա ու շատ չմտածի: Էդ ժամանակ ես էլ, ախպերս էլ միշտ պապայի մոտ էինք լինում, մաման էլ միշտ ասում էր, որ իրա մոտից տեղ չգնանք ու տենց ինչ-որ բաներ էինք սարքում հետաքրքիր: Համ մեր ժամանակն էր հետաքրքիր անցնում, համ ինքը չէր ներվայինանում:

---

* Պատերազմի մասնակիցների՝ ընտանիքի անդամների հանդեպ բռնություն կիրառելը:

Որ իմ պապան պատերազմից եկել էր, իրան կարողանում էր կառավարեր, բայց, օրինակ, հոպարս ու շատ ուրիշ ծանոթներ լացում էին ու տենց էին հանգստանում: Իմ պապան զորքեր ա ունեցել, որ զոհվել են ու հիմնականում էն ուշադրությունը, որ մեզ ա դարձրել, զորքերին ա միշտ տվել: Ու իրա հանգստությունը գտնում էր իրանց գերեզմանին գնալով, իրանց տեսնելով: Դրանից հետո էլ ոնց որ էդ սերը, ջերմությունը, որ հիմնականում ինքը զորքերին էր տալիս, դե հիմնականում տանը չէր լինում, հիմա էդքանը ինքը ինձ ա տալիս, իրա երեխաներին ա տալիս:

Հոգեբանի մոտ գնալը կօգնի [պատերազմի մասնակիցների վերականգնմանը], բայց մեր հասարակությունում կարող ա գնա որոշ մասը, բայց 90%-ը, իմ կարծիքով, կհրաժարվի: Օրինակ, եթե տղան լացի, անունը կսարքեն՝ ղզիկ ա, էս ա, էն ա, ինչի՞ ա լացում: Հույզը բոլոր մարդկանց համար ա՝ և տղաների, և աղջիկների: Օրինակ, պատերազմի շրջանում կանայք մեր Ճամբարակի, բոլորը լացում էին, թեկուզ գոռում էին, իսկ տղամարդիկ ոնց որ իրանց մեջ սենց զսպում էին: Էդ ամեն ինչը իրանց մեջ էր կուտակվում, ու իրանք չէին կարողանում ինչ-որ ձև դուրս հանել, օրինակ՝ գոռային, լացեին: Էդ ժամանակ, իմ կարծիքով, իրանց վիճակը ավելի ծանր էր,

Ես ապագայի մասին էս վերջերս սկսել եմ շատ մտածել: Մայրս ու հայրս ուզում են ինձ 9-ից հետո հանեն և տան Դիլիջան՝ ուսում ստանալո: Բայց ես չգիտեմ՝ ինչ անեմ: Իմ մեջ շատ վախ կա: Ես վստահ եմ ինձ վրա, որ կարող եմ ինձ դրսևորել Դիլիջանում: Ես կարող եմ մենակ ապրել: Ես կարող եմ հոգալ իմ խնդիրների և դասերի համար: Բայց... ախր այդ «բայց»-ը: Իմ սրտի խորքում ես չեմ ուզում գնամ: Ուզում եմ մնամ մեր Ճմբարակում, մեր թաղում: Ուզում եմ ամեն ռավեր քնիցս վեր կենամ, քյամ մեր բալկոնումը կայնեմ ու եշեմ մեր թաղի ժղովուրդի անցն ու դարձը:

Ապագայի հետ կապված՝ ուզում եմ ապագայում գնամ Հայաստանից, բայց ու՞ր գնամ, խի՞ գնամ՝ գիդում չեմ: Էս վերջի նորությունները պապիկի հետ էի նայում: Լուրերով ասում էին՝ մի քանի գյուղ են տվել թուրքերին [ադրբեջանցիներին]: Պապին ասեց՝ հաջորդը մենք ենք: Սիրտս վախ մտավ: Հաջորդ օրը ընկերուհիներով էինք խոսում. նույնը ասեցին: Շատ եմ վախում, որ մեկ էլ հանկարծ մի պյան չլի: Մամայենցս աշխատանքը շատ եմ գնահատում: Դե վերջում էլ մի պյան եմ ուզում ասած ըլեմ, ա քե մատաղ: Ոնց որ Անահիտ տատս ա ասում՝ «բեյմուրազ ըլնեն թուրքերը, մեր գործերին էլ հաջողություն»:

Իմ շրջապատում բոլորը ասում են, որ Հայաստանում ապագա չկա, բայց ես ոչ ոքի չեմ լսում ու պնդում եմ հակառակը: Այդ իմ մտածելակերպը էլ ավելի զարգացավ, երբ ես մեկնեցի Գերմանիա: Այնտեղ ես ինձ լիարժեք չէի զգում, քանի որ անընդհատ մտածում էի հայրենի հողիս մասին, ընտանիքիս մասին: Ամեն օր զանգում էի մայրիկիս և խնդրում էի ցույց տալ Ճամբարակը, մեր տան դիմացի այգին: Էս պատմությունից հետո սկսեցի էլ ավելի արժևորել Ճամբարակս և հասկացա մի բան. որ չեմ ուզում ոչինչ փոխվի այստեղ: Հետո սկսվեց Արցախի պատերազմը: Դեպքից մի ամիս առաջ պետք է գնայի այնտեղ [Արցախ], բայց չստացվեց: Ու հիմա, երբ որ դրությունը այսպիսին է, ասում եմ, որ գնալու եմ այնտեղ՝ թեկուզ, որ իմ երկրում չէ, բայց անպայման ես պետք է այնտեղ լինեմ և հասկանամ, որ դա իմ պապերի հողն է:

Իրենց պատմություններով, հույզերով,
նկարազարդումներով և լուսանկարներով կիսվեցին՝

Միլենա Գրիգորյանը, Կարինե Թիզյանը, Անուշ Մխիթարյանը, Զարուհի Սարգսյանը, Նարե Սահակյանը, Անահիտ Կիրակոսյանը, Օֆելյա Երիցյանը, Էլենա Հարությունյանը, Ժասմին Միրզոյանը, Անահիտ Գրիգորյանը, Մելինե Կիրակոսյանը, Ինա Գրիգորյանը, Միլենա Սահակյանը:

Զինը համադրեցին՝
Գայանե Ղազարյանը և Նարեկ Բարսեղյանը:

Քարտեզի ձևավորումը՝
Արսեն (Սեն) Օլքինյանի:

Նախագիծն իրականացվել է Հայաստանում
կանանց հիմնադրամի աջակցությամբ:

WOMEN'S FUND ARMENIA

Երևան, 2024